



Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N-----
62
< 06 > 04 ----- 2018թ.

ք. Արտաշատ

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2018 թվականի տարեկան ծրագրով.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Ազատավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև ապրիլի 12-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Ազատավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2015, 2016 և 2017 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի, հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ